



Հրատարակուել է
Գալուստ Կիլպենկեան հիմնարկութեան
հովանաւորութեամբ



535-2015

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ


ԹԻԻ 1-12

ՅՈՒՆՈՒԱՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՃԻԹ. ՏԱՐԻ 2015

ՀԱՆԳԻՍ

Հ. ՕԳՈՍՏԻՆՈՍ ՎՐԴ. ՍԵՔՈՒԼԵԱՆԻ



Հ. Օգոստինոս Վրդ. Սեքուլեան, բազմավաստակ Մխիթարեան Միաբան, ձեռագրագէտ, դրամագէտ, թարգմանիչ, դաստիարակ, ծնած է Ճուրճով, Gheorgheni, (ներկայիս՝ Ռումանիա) 1921, Սեպտեմբեր 19-ին:

Մկրտութեան անունով Լասլօ, հազիւ 10 տարեկան, ուղարկուած է Վիեննայի Մխիթարեան վանքը որպէս ժառանգաւոր: Լասլօ հունգարախօս էր, հայերէնը սորված է միայն վանքի մէջ, ուր կատարած է նաեւ իր դպրոցական ամբողջ ընթացքը:

1938, Յուլիս 16-ին վանական ուխտերով անդամագրուած է Մխիթարեան Միաբանութեան առնելով Օգոստինոս անունը:

Իմաստասիրական եւ աստուածաբանական ուսումները աւարտելէն վերջ 1944, Դեկտեմբեր 31-ին ձեռնադրուած է կուսակրօն քահանայ:

1951-1954 փոխ տնօրէնի պաշտօն վարած է Մայր վանքի ղարեկանքին մէջ:

1954-1957 եղած է Ընդհանուր Մատակարարի օգնական:

1957-ին կ'ուղարկուի Բէյրութ որպէս Մխիթարեան վարժարանի փոխ տնօրէն եւ 1959-ին կը ստանձնէ նաեւ տնօրէնութեան պաշտօնը, որ կը վարէ մինչեւ 1967:

1968-1983 Վիեննայի Մայր վանքն է նորէն որպէս Ընդհանրական Վարչութեան անդամ:

1974-1977 կրկին կը վարէ Բէյրութի Մխիթարեան վարժարանի տնօրէնութիւնը:

1977-83 եւ 1988-92 Վիեննա է որպէս «Հանդէս Ամսօրեայի» խմբագիր:

1980-1990 եղած է Միաբանութեան Ընդհանուր մատակարար:

1983-1992 վարած է միաժամանակ Աթոռակալի պաշտօնը:

1992-ին կ'ուղարկուի Լոս Անճելըս որպէս Մխիթարեան վարժարանի տնօրէն, պաշտօն մը, որ կը վարէ մինչեւ 2009:

2014, Յուլիս 18-ին իր մահականացուն կը կնքէ Լոս Անճելըսի մէջ եւ իր փափաքին Համաձայն մարմինը կը փոխադրուի Վիեննա եւ կը թաղուի քաղաքի կենտրոնական գերեզմանոցի Մխիթարեան Միաբանութեան դամբարանի մէջ:

Հ. Օգոստինոս Վրդ. Սեքուլեան իր բոլոր պաշտօններուն եւ գործերուն մէջ ցոյց տուած է ժիր, կանոնաւոր եւ յարատեւ աշխատանք ու նուիրում: Աշխատած է նաեւ որպէս Մխիթարեան տպարանի վարիչ եւ Մխիթարին ըմպելիքի արտադրող: Իր մեծ արժանիքն է մանաւանդ Վիեննայի Մխիթարեան դիւանի դասաւորման ղեկարին աշխատանքը, որ կատարած է առանձին՝ մաքրելով, կարգի բերելով եւ դասաւորելով Միաբանութեան եւ մեր ազգի պատմութեան համար կարեւոր այդ վաւերագիրները:

ԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ

Ինչպէս կը տեսնուի իր Համառօտ կենսագրութենէն, Հ. Օգոստինոս Սեքուլեան ունեցած է բազմազբաղ գործունէութիւն: Իր հայագիտական աշխատանքները կատարած է, երբ գտնուած է Վիեննա, Մայր վանքը, ուր ունեցած է Համեմատաբար աւելի ազատ ժամանակ եւ մանաւանդ գիտական աղբիւրներու մեծ դիւրութիւն:

«Հանդէս Ամսօրեայի,-ի մէջ լոյս տեսած իր յօդուածները

Մլքէի Աւետարանը ՅՁԱ = 932ին գրուած, 1943, էջ 23-38: (Առաքելեան Հ. Ղուկաս եւ Սեքուլեան Հ. Օգոստինոս)

Հայ ծագումէ՞ր Մօրիկ կայսր, 1947, էջ 237-244:

Մարկոսի աւետարանի կարճ վերջաւորութիւնը հայերէն թարգմանութեամբ, 1950, էջ 448-452:

Լեոն Բ.ի օմման դրամները, 1960, էջ 204-208:

Այսա քաղաքին մէջ կոխուած հայ դրամներ, 1968, էջ 213-218:

Renoux Athanase, Le Codex Arménien Jérusalem 121. Brepols-Turnhout 1969. Գրախօսական, 1969, էջ 111-120:

Տէր Խաչատուրեան Արտաշէս եւ Հրանդ Գանգրունի՝ Հայոց լեզուի Նոր Բառարան: Պէյրութ, 1968: Գրախօսական: 1969, էջ 511-512:

Դիտողութիւններ Լեոն Ա.ի 1187-1219 դրամներու պատկերատիպերու ծագման մասին, 1970, էջ 477-488:

Վիեննայի Մխիթարեան թանգարանի Լեոն Ա.ի կրկնադրած «օմման» արծաթ դրամները: 1970, էջ 365-370:

Վիեննայի Մխիթարեան թանգարանի Լեոն Ա.ի պղնձ դրամները, 1970, էջ 99-106:

Միանսեան Լ. Գ. եւ Եգանեան Օ. Ս.՝ Ցուցակ ձեռագրաց Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ Վանաց Թանգարանի, Բ. հատոր, Վիեննա, 1972: Գրախօսական, 1972, էջ 501-504:

Կիտա՞յ, 1973, էջ 327-330:

Ստեփանէ՞ թէ Ստեֆանէ, 1973, էջ 81-86:

Հայերէն ձեռագիր մը Տօմիկեան Հաստատութեան մօտ Բէյրութ, 1975, էջ 101-106:

Անճանօթ էջ մը հայ թատրոնի պատմութեան մէջ, 1981, էջ 143-150:

Tarisznyás Márton, Gyergyó történeti néprajza. Cluj- napoca, 1982. (Ճորճոպի ազգագրական պատմութիւնը): Գրախօսական, 1981, 149-152: ¹

Տէր Պօղօսեան Հ. Պետրոս Վրդ.ի գրական վաստակին ցուցակը, 1981, 7-12:

Յիսնակ-Յիսնակաց, Յիսնեակ-Յիսնեկաց, 1982, էջ 29-34:

Հազուագիտ տպագրութիւններ Վիեննայի Մխիթարեան Մատենադարանին մէջ 1801-1850, 1983, էջ 101-152:

Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի, հատոր Ա., Երեւան, 1984: Գրախօսական, 1985, էջ 363-366:

Դանիէլեան Անուշաւան Վրդ.՝ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան, Անթիլիաս, 1984: գրախօսական, 1985, էջ 367-372:

Առանձին հրատարակութիւններ

Նոր կտակարանի Գրքերու Կարգը Հայոց քով. նախ լոյս տեսած է ՀԱ. 1947, էջ 97-106, 179-190, 289-299, 347-357: Գերմաներէն ամփոփում, էջ 483-489:

Յետոյ առանձին հատորով հրատարակուած է «Ազգային Մատենադարան»ի մէջ, թիւ 160, 1949:

Վիեննայի Մխիթարեան թանգարանի Կոստանդին Գ.-Լեոն Ե. դրամները. ՀԱ.1971, էջ 75-98, 207-238:

Առանձին հատորով «Ազգային Մատենադարան» թիւ 216, 1971:

¹ Տարօրինակ է որ գրքի հրատարակութեան թուական գրուած է 1982, իսկ գրախօսականը դրուած է ՀԱ.ի 1981 տարուան մէջ:

Վիեննայի Մխիթարեան թանգարանի Աւշինի արձաթները. ՀԱ. 1972, էջ 95-110 եւ Վիեննայի Մխիթարեան թանգարանի Լեւոն Գ.ի 1306-1307 պղինձները. ՀԱ. 1972, էջ 225-238, 373-382:

Առանձին հատորով «Ազգային Մատենադարան» թիւ 220, 1982:

Ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանին ի Վիեննա, Գ. հատոր: ՀԱ.ի մէջ 1977-1983 տարիներուն լոյս տեսած:

Առանձին հրատարակուած՝ 1983:

Աստուածաշունչի, Հիմ եւ Նոր կտակարաններու ամբողջական թարգմանութիւնը աշխարհաբար (արեւմտահայերէն), որ դժբախտաբար կը մնայ անտիպ:

Խմբագրութիւն

ՄԻՐԻԱՆ ԱՔԵՄԵՆԵԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Յովհաննես Խորիկեան

Անտիկ աղբիւրներում Սիրիայի նուաճումը վերագրում է Կիւրոս Մեծին, ընդ որում՝ սիրիացիները եւ ասորեստանցիները յիշատակում են կողք կողքի¹: Բաբելոնը նուաճելուց՝ յետոյ՝ Ք. ա. 535 թ., Կիւրոս Մեծը Միջագետքից եւ Եփրատից արեւմուտք ընկած տարածքներից՝ Սիրիայից, Փրենիկիայից, Անդրյորդանանից, Կիպրոսից եւ Պաղեստինից, ստեղծում է մէկ նահանգ՝ Գուբարուի (հին պարսկերէն՝ Gaubarua, անտիկ աղբիւրներում՝ Գորբրիա) կառավարութեամբ, որն այդ պաշտօնում մնում է առնուազն մինչեւ Ք. ա. 525 թ.: Վարչական այս նոր միաւորը, որն ընդգրկում էր նախկին Նորբաբելոնական թագաւորութեան գրեթէ ամբողջ տարածքը, կրում էր Բաբելոն եւ Անդրգետք անուանումը²: Ք. ա. 520 թ. վարչական այս միա-

ւորի կառավարիչ է նշանակում պարսիկ Ուշտանուն, սակայն Ք. ա. մօտ 516 թ. Դարեհ Ա-ն այս սատրապութիւնը բաժանում է երկու մասի. Բաբելոնի կառավարիչ է նշանակում Ուշտանուն, իսկ Անդրգետքի՝ Թատնայը, ով վարչական առումով ենթարկւում էր Ուշտանունին³:

Սատրապութիւնների հերոզոտեան ցուցակում Միջագետքը եւ Եփրատից արեւմուտք ընկած երկրները յիշատակում են առանձին սատրապութիւններում. առաջինը՝ Բաբելոնը եւ մնացեալ Ասորեստանը, մտնում էին IX սատրապութեան, իսկ Եփրատից արեւմուտք ընկած երկրները՝ V սատրապութեան կազմի մէջ⁴: Վերջինս Գաղատասի նամակում համապատասխանում է πέραν Εὐψράτου «Եփրատի միւս կողմում» արտայայտութեանը⁵:

1 Քսենոփոն, *Կիրոպեդիա*, թարգմ. Ս. Կրկեաշարեանի, Երեւան, 2000, էջ 5:
2 M. W. Stolper, *The Governor of Babylon and Across-the-River in 486 B. C.*, - "Journal of Near Eastern Studies", Vol. 48, № 4, 1989, p. 286; M. Heltzer, *Some Aspects of Achaemenid Taxation in the V Satrapy (Phoenicia)*, in M. Molina et al. (edd.), *Arbor scientiae. Estudios del Proximo Antiguo dedicados a Gregorio del Olmo Lete*, "Aula Orientalis", 17-18, 1999-2000, p. 349; M. A. Дандамаев, *Политическая история Ахеменидской державы*, Москва, 1985, с. 52; նոյնի՝ *Mecopotamia u Iran в VII-IV вв. до н. э.: Социальные институты и идеология*, Санкт-Петербург, 2009, с. 54, 72; նոյնի՝ *Ахеменидская империя: социально-административное устройство и культурные достижения*, Санкт-Петербург, 2013, с. 56; T. Bryce, *Ancient Syria*, Oxford University Press, 2014, p. 149. Մասնագիտական գրականութեան մէջ այն կարծիքը, թէ Գուբարուն նուաճում է Կուսիումի Ուգարութի հետ, ով ղեկավարել է Կիւրոս Մեծի ժամանակ Բաբելոնի գրաւումը, պէտք է մերժել, քանի որ Ուգարուն վախճա-

նուել է Բաբելոնի գրաւման տարում՝ Ք. ա. 539 թ. (M. A. Дандамаев, *Mecopotamia u Iran...*, с. 72): Որոշ ուսումնասիրողներ նոյնիսկ ֆակում են Ուգարութիւն, Գորբիասին եւ Դարեհ Ա-ի նոյնանուն գիզակակրին նոյն անձնատրութիւնը համարել (տե՛ս M. A. Дандамаев, *Политическая история Ахеменидской державы*, с. 45):
3 M. W. Stolper, *The Governor of Babylon and Across-the-River in 486 B. C.*, p. 289; M. A. Дандамаев, *Mecopotamia u Iran...*, с. 54. Ուշտանուն եւ Թատնայի նոյնացումը չի ֆաստատում (տե՛ս A. F. Rainey, *The Satrapy "Beyond the River"*, - "Australian Journal of Biblical Archaeology", 1969, № 1/2, p. 53):
4 Հերոդոտոս, *Պատմութիւն ինը գրքից* (պատմեւտե՛ Հերոդոտոս), թարգմ. Ս. Կրկեաշարեանի, Երեւան, 1986, III, էջ 91-92:
5 A. T. Olmstead, *A Persian Letter in Thucydides*, - "The American Journal of Semitic Languages and Literatures", Vol. 49, № 2, 1933, p. 158 (pp. 154-161).